Գործարար ծրագրի առաջարկ

I. Տիտղոսաթերթ

Դիմորդի անվանումը		Կապանի քաղաքապետարան	
Ծրագրի անվանումը		Կապան քաղաքի Լեռնագործների փողոցի թիվ 16 հասցեում գտնվող <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Դ>> մասնաշենքի վերակառուցում՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն /մանկապարտեզ/ կազմակերպելու համար	
Ծրագրի սկիզբ/ավարտ (օր/ամիս/տարի)	01օգոստոսի 2013թ-01 օգոստոսի 2018թ	Ծրագրի տևողությունը	5 տարի
Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)		ՀՀ Սյունիք, ք.Կապան, Ա.Մանուկյան փողոց, 5ա Կապան համայնքի բնակավայր	
ՏԻՄ ղեկավարը (հեռախոսահամար, էլ-փոստի հասցե)		Կապան համայնքի ղեկավար, հեռ. 0285-52036, 010-281896 website kapan.am, email: info @ kapan.am	
Ծրագրի ղեկավարը/համակարգողը (հեռախոսահամար, էլ-փոստի հասցե)		Կապան համայնքի ղեկավար, հեռ. 0285-52036 010-281896	
Դիմորդի գործունեության հասցեն (համայնք, փողոց, շենք, հեռախոսահամար, ֆաքս և էլ-փոստի հասցե)		ՀՀ. Սյունիքի մարզ, ք. Կապան , Ա. Մանուկյան 5 ա	
Գործարար ծրագրի ժամկետը		50 տարի	
Կապան համայնք, <<ՀՊՄԿ>> ՓԲԸ, <<ԴԳՄՔ>> ՓԲԸ, <<Վորլդ Վիժն ինթերնեյշնլ>> ՄԲԿ, <<Քաունթերփարթ ինթերնեյշնլ կազմակերպություն>> ՀՆ		150.0 մլն ՀՀ դրամ	
Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ ՀՀ դրամով		150.0 մլն ՀՀ դրամ	

Համայնքի ղեկավար՝ Ա. Հայրապետյան _____
ստորագրություն

ՀԱԽ-ում ներգրավված ավագանու անդամներ՝ Ա.Թումանյան _____ _____
անուն, ազգանուն ստորագրություն

Կ.Շահինյան _____ _____
անուն, ազգանուն ստորագրություն

Ամսաթիվ՝ 20.05.2013թ.

ԿՆԻՔ

II.Առաջարկվող ծրագրի նկարագրություն (առավելագույնը 3 էջ՝ առանց կից փաստաթղթերի)

1. **Հիմնախնդրի ձևակերպումը և հիմնավորումը** – Լեռնագործների փողոցի թիվ 16 հասցեում գտնվող <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Դ>> մասնաշենքի վերակառուցում՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն /մանկապարտեզ/ կազմակերպելու նպատակով:

Կապան քաղաքային համայնքը գտնվում է Հայաստանի հարավ-արևելքում, Երևանից 320 կմ. հեռավորության վրա: 1996թ-ից Կապանը Սյունիքի մարզկենտրոնն է: Քաղաքով է անցնում Երևան-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետություն միջպետական մայրուղին: Քաղաքը գտնվում է տաք կլիմայական առաջին, սեյսմիկ պատկանելիության երկրորդ գոտում: Բնակչությունը՝ 45500 մարդ:

Համայնքում գործում են համայնքային ենթակայության 12 նախադպրոցական ուսումնական հաստատություններ, մանկապատանեկան, մարմնամարզության, աթլետիկայի մասնագիտացված մարզադպրոցներ, թիվ 1, 2, 3 երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ և Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն: Նշված նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպություններ են հաճախում մոտ 2550 երեխա:

Համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների թիվն անընդհատ աճում է և նոր մանկապարտեզի կազմակերպումը անհապաղ լուծում պահանջող խնդիր է:

Կապան քաղաքի Լեռնագործների, Ռ.Մինասյան փողոցների թվով 21 բազմաբնակարան բնակելի շենքերում, Հ.Ավետիսյան փողոցի թիվ 1 և 1ա բազմաբնակարան բնակելի շենքերում, Դավիթ Բեկ և Լենհանքեր թաղամասերի թվով 14 բազմաբնակարան բնակելի շենքերում և Արփիկ, Աշոտավան և Լենհանքեր թաղամասերի, Լեռնագործների փողոցի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ նրբանցքների 125 անհատական բնակելի տներում հաշվառված և ապրում են մոտ 6160 բնակիչ, որը կազմում է Կապան համայնքի բնակչության 13.5 %, որից մոտ 240-ը նախադպրոցական հասակի երեխաներ: Քանի որ թաղամասում չկա ՆՈՒՀ, ուստի երեխաների զգալի մասը ընդհանրապես մանկապարտեզ չի հաճախում և դպրոցում ունենում են բարոյա-հոգեբանական, ուսումնական դժվարություններ,իսկ մի մասը ստիպված հաճախում է վերոնշյալ փողոցներից և թաղամասերից բավական հեռու տեղակայված քաղաքի թիվ/թիվ 1, 6, 7, 8 և 9-րդ մանկապարտեզները, քանի որ տարածքում չկա ՆՈՒՀ /մանկապարտեզ/:Փաստորեն համայնքի բնակիչների մի մասի համար ստեղծվել է

անհարմար իրավիճակ՝ կապված երեխաներին այլ թաղամասերում գտնվող ՆՈՒՀ-եր տեղափոխելու հետ: Հարկ է նշել, որ քաղաքի մանկապարտեզները ծանրաբեռնված են և ունեն բավական թվով հերթագրված երեխաներ, որոնց ընդունումը կապված գործող խմբերի և ՀՀ կառավարության կողմից ընդունված չափորոշիչների համաձայն անհնար է:

Հասարակական կյանքի զարգացման համար անհրաժեշտ բարեկարգ պայմաններ ապահովելու, երիտասարդ ընտանիքներին աջակցելու, բնակիչների քաղաքացիական ակտիվության մակարդակը բարձրացնելու, նրանց համար խիստ կարևոր նշանակություն ունեցող և նրանց կողմից բարձրացրած հարցերին արդարացի և ճիշտ լուծում տալու, երեխաների նախադպրոցական առօրյան լավագույնս կազմակերպելու համար բարվոք պայմաններ ստեղծելու, մատաղ սերնդի դաստիարակության հարցերը գտնվում են պետության և համայնքի հսկողության ներքո: Դաստիարակված, համակողմանի և ներդաշնակ զարգացած մատաղ սերունդ կրթելու, պետության կայացման և առողջ հասարակություն ձևավորելու, նրանց ուսուցման և դաստիարակության գործընթացը ճիշտ կազմակերպելու, վերոնշյալ թաղամասերի և փողոցների նախադպրոցական ուսումնական հաստատությունների երեխաների ծնողների բազմաթիվ խնդրանքներին, դիմում-բողոքներին դրական լուծում տալու, հնարավորինս սեղմ ժամկետներում մանկապարտեզ կազմակերպելու, ժամանակակից պահանջներին բավարարող ՆՈՒՀ-ի շենք ունենալու համար նպատակահարմար ենք համարում վերակառուցել <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Դ>> մասնաշենքը:

Ներկա պահին համայնքը համագործակցում է տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ գործող թվով 12 ՆՈՒՀ-երի, մոր և մանկան կենտրոնի, մանկապատանեկան, մարմնամարզության, աթլետիկայի մասնագիտացված մարզադպրոցներ, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի և մշակույթի կենտրոնի մասնաշենքերի վերանորոգման և գույքով համալրելու համար: <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Դ>> մասնաշենքը մանկապարտեզի վերակառուցման համար համայնքը ձեռք է բերել նախնական պայմանավորվածություն <<Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ>> ՓԲ ընկերության, <<Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի>> ՓԲ ընկերության, <<Վորլդ Վիժն ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության և <<Քաունթերփարթ ինթերնեյշնլ կազմակերպություն>> հայաստանյան ներկայացուցչության հետ:

Բնակելի որոշ թաղամասերում բակային խաղահրապարակների, խաղամիջոցների բացակայության պատճառով բնակիչները և երեխաները զրկված են իրենց ազատ ժամանցը անցկացնելու մինիմալ հնարավորություններից: Ներկա սոցիալական պայմաններում թաղամասի բնակիչների ու երեխաներիի որոշ մասը հնարավորություն չունեն ամառային արձակուրդներին իրենց հանգիստը կազմակերպել առողջարաններում կամ ճամբարներում: Մանկապարտեզ ունենալու պարագայում ոչ միայն նախադպրոցական հասակի մանուկները, այլ նաև թաղամասի մնացած երեխաները հնարավորություն կունենան օգտվել մանկապարտեզի խաղահրապարակից:

Նոր թաղամաս կառուցելուց ի վեր, սկսած 1980 թվականից մանկապարտեզ ունենալու խնդիրը եղել է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում, սակայն ԽՍՀՄ-ի փլուզման, քաղաքի՝ հայ-ադրբեջանական պատերազմական գործողությունների կիզակետում գտնվելու, ժամանակավոր զինադադար հայտարարելուց հետո հրետակոծված բնակելի շենք-շինությունների վերականգնման անհրաժեշտության, համայնքի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի, բյուջեի սղության պատճառով հնարավոր չի եղել վերոնշյալ խնդրին լուծում տալ:

Համայնքի վերոնշյալ թաղամասում ՆՈՒՀ ունենալու հարցը քննարկվել է ավագանիների, քաղաքի ակտիվի, հասարակական կազմակերպությունների, հասարակական խորհրդի, բնակչության լայն շրջանում. քննարկումների արդյունքում որոշվել է, որ անհրաժեշտ է հարցը լուծել սեղմ ժամկետում և անհապաղ, իսկ դա հնարավոր է իրականացնել <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Դ>> մասնաշենքը վերակառուցելու պարագայում:

Քննարկվել է նաև նոր մանկապարտեզ կառուցելու տարբերակը, որը սակայն ենթադրում է զգալի ֆինանսական, մարդկային, ժամանակային ռեսուրսներ, ուստի խնդիրը անորոշ ժամանակ կմնա անլուծելի:

2. Դիմորդի փորձն ու տեխնիկական կարողությունները

Կապւսն քաղաքային համայնքն անցած տարիներին համագործակցելով Հայաստանում գործող մի շարք միջազգային դոնոր կազմակերպությունների հետ, համատեղ ներդրումների շնորհիվ իրականացրել է համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող առաջնահերթ մի շարք ծրագրեր:

2002-2006 թվականներին ծրագրեր են իրականացվել «Ուրբան» ինստիտուտի, «Եվրազիա», RTI և այլ կազմակերպությունների հետ:

2006 թվականին «Փրկեք երեխաներին» միջազգային կազմակերպության հետ համատեղ վերակառուցվել է Կապանի թիվ 10 ՆՈՒՀ-ի /մանկապարտեզ/ մասնաշենքը:

2008 - 2011թվականներին <<Վորլդ Վիժն ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության հետ համատեղ համայնքի «Սարահարթ» և «Հալիձոր» թաղամասերում վերանորոգվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 133 մուտքեր, ակումբ-գրադարաններ, 12 խաղահրապարակներ, 7 նախադպրոցական ուսումնական հաստատությունների խմբասենյակներ և խոհանոցներ, համայնքի տարբեր թաղամասերում կառուցվել է հանգստի գոտիներ, 3 դպրոցներում և Երկաթուղայինների 3-րդ նրբանցքում ստեղծվել է համակարգչային դասասենյակներ, Բեխ և Աշոտավան թաղամասերում վերականգնվել է խմելու ջրագիծը և այլն: Հասցեն՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Մ. Ստեփանյան, հեռ. /+37410/ 749118, 749119, /374 285 22770/: www.wvarmenia.am , ղեկավար Ս. Արզումանյան:

Գործընկեր կազմակերպություններից են <<Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ>> ՓԲ ընկերությունը /ք.Քաջարան, Լեռնագործների 18, /հեռ. /374 285/ 33078/ և <<Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի>> ՓԲ ընկերությունը /ք. Կապան, Գործարանային փողոց 4, հեռ. /374 285/ 59054/, որոնց հետ նույնպես իրականացվել են ծրագրեր համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերանորոգման, ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման և բարեկարգման, բազմաբնակարան շենքերի տանիքների և վերելակների վերանոգման, հանգստի գոտիների կառուցման, մշակութային օջախների վերանորոգման աշխատանքներ:

2011 թ ապրիլից համագործակցության սկիզբ է դրվել <<Քաունթերփարթ ինթերնեյշնլ կազմակերպություն>> հայաստանյան ներկայացուցչության հետ: Ներկա պահին իրականացվում է քաղաքապետարանում <<մեկ պատուհանի>> հիմնման և

<<Կապանի մարմնամարզության դպրոց>> ՀՈԱԿ-ի մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները:

Տեխնիկական կարողություններ - Համայնքի ղեկավարի աշխատակազմը ունի հնարավորություններ օգտվելու համակարգչային սարքավորումներից, ինտերնետ կապից, ֆաքսից:

3. Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակը - Կապան քաղաքի Հ.Ավետիսյան, Լեռնագործների, Ռ.Մինասյան փողոցների և Դավիթ Բեկ, Արփիկ, Աշոտավան և Լենհանքեր թաղամասերի նախադպրոցական հասակի երեխաների համար հիմնել նոր ՆՈՒՀ /մանկապարտեզ/:

Ակնկալվող արդյունքները՝

- Լուծում կստանա համայնքի համար կարևոր հիմնախնդիր:
- Վերոնշյալ թաղամասերի և փողոցների նախադպրոցական հասակի երեխաները հնարավորություն կունենան հաճախել ՆՈՒՀ /մանկապարտեզ/:
- Կբարելավվի թաղամասի մոտակա բնակելի շենքերի բնակիչների և երեխաների ազատ ժամանցի պայմանները:
- Երեխաները կօգտվեն մանկապարտեզի խաղահրապարակից:
- Մանկապարտեզի հարակից տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի, արդյունքում կավելանան կանաչապատ տարածքները:
- Բնակիչները տրանսպորտային ծախսեր չեն կատարի այլ թաղամասերում գործող մանկապարտեզներից օգտվելու համար:
- <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Դ>> մասնաշենքի վերակառուցման՝ նախադպրոցական ուսումնական հաստատության /մանկապարտեզ/ կազմակերպման ժամանակ համայնքի մոտ 50 բնակիչներ կունենան ժամանակավոր աշխատանք:

4. Նպատակներին հասնելու համար նախատեսված գործողությունները/ ռազմավարությունները.

4.1. Քաղաքապետարանում ընթանում է <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Դ>> մասնաշենքի վերակառուցման՝ նախադպրոցական ուսումնական հաստատության /մանկապարտեզ/ կազմակերպման նպատակով անհրաժեշտ աշխատանքային ծրագրի մշակման և ժամանակացույցի կազմման գործառույթներ:

4.2. Աշխատանքների իրականացմանն ուղղված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում:

5 Շահառուները. Կապան քաղաքի Լեռնագործների, Ռ.Մինասյան փողոցների թվով 21 բազմաբնակարան բնակելի շենքերում, Հ.Ավետիսյան փողոցի թիվ 1 և 1ա բազմաբնակարան բնակելի շենքերում, Դավիթ Բեկ և Լենհանքեր թաղամասերի թվով 14 բազմաբնակարան բնակելի շենքերում և Արփիկ, Աշոտավան և Լենհանքեր թաղամասերի, Լեռնագործների փողոցի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ նրբանցքների 125 անհատական բնակելի տներում հաշվառված և ապրող մոտ 6160 բնակիչներ:

6. Աշխատակազմ. - Ծրագրի աշխատակազմը բաղկացած է 4 հիմնական աշխատակիցներից՝ 1 փորձագետից, ինչպես նաև որպես վերահսկման գործունեություն իրականացնող անդամներից: Աշխատակիցներն ունեն բավականին փորձ նախատեսված աշխատանքներն պատշաճ մակարդակով իրականացնելու համար:

7. Ներդրումների ժամանակացույց

Ներդրման տեսակը	Տարեկան ներդրումները /մլն. ՀՀ դրամ/					
	Առաջին տարի	Երկրորդ տարի	Երրորդ տարի	Չորրորդ տարի	Հինգերորդ տարի	Ընդամենը
Շինության վերակառուցում և հիմնանորոգում	5.0	10.0	20.5	35.0	36.0	***106.5***
Խաղահրապարակների կառուցում	-	2.0	4.0	5.0	5.0	***16.0***
Շրջակա տարածքի ցանկապատում, բարեկարգում և կանաչապատում	2.0	1.0	2.0	2.0	3.0	***10.0***
Գույքի ձեռքբերում	-	-	-	-	15.0	***15.0***
Մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական վճարների սուբսիդավորում/փոխհատուցում/	-	-	-	-	2.0	***2.0***
ՆՈՒՀ-ի աշխատողների համար դասընթացների կազմակերպում և ուսուցողական, մեթոդական ձեռնարկների ձեռք բերում	-	-	-	-	0.5	***0.5***
Ընդհանուրը	***7.0***	***13.0***	***26.5***	***42.0***	***61.5***	***150,0***